

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

18.05.2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի բաժնի պետ Գ. Թորոսյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Կապի ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 12-ԿԱՊ (ամսական) և «Կապի առանձին ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 13-ԿԱՊ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները հաստատելու, ինչպես նաև «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» ձև թիվ 35-ՊԱՏԱՀԱՐ (ամսական) և «Օտարման նպատակով ավտոմեքենաների հաշվառումից դուրս գրման մասին» ձև թիվ 2-ԱՎՏՈ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերի ու լրացման մեթոդական ցուցումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Թորոսյան/

Որոշեցին՝

1.1. 1. Հաստատել «Կապի ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 12-ԿԱՊ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի «Կապի ծառայություններից

ստացված եկամուտների մասին» ձև թիվ 12-ԿԱՊ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի սեպտեմբերի 1-ից:

1.2. 1. Հաստատել «Կապի առանձին ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 13-ԿԱՊ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի «Կապի առանձին ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 13-ԿԱՊ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի սեպտեմբերի 1-ից:

1.3. 1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 7-ի «Ձև թիվ 35-պատահար (ամսական) «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևից հանել «(Պետավտոտեսչության վարչությունը)» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի հունիսի 24-ի «Օտարման նպատակով ավտոմեքենաների հաշվառումից դուրս գրման մասին» ձև թիվ 2-ավտո (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևից հանել «(Պետավտոտեսչության վարչությունը)» բառերը:

/Նորմատիվ/

2. «Հաղորդումը Տարածքային վիճակագրության զարգացման ռազմավարության նախագծի վերաբերյալ»:

/Ձեկուցող՝ Ա. Աղազարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ ներկայացված փաստաթղթի նախագծին սկզբունքների, մոտեցումների և բովանդակության առումով: Միաժամանակ, առաջարկվեց ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանին.

- լրամշակել փաստաթղթի նախագիծը Եվրամիության վիճակագրական համակարգում տարածքային վիճակագրության մասով ընդունված նոր հասկացությունների, սահմանումներին և սկզբունքներին համապատասխան,
- փաստաթղթի նախագծի լրամշակված տարբերակը կարծիքի ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներին,
- բոլոր քննարկումների և լրամշակման արդյունքում ձևավորված տարբերակը ներկայացնել ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին, զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

/Անհատական/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին:

4.1. «Հաղորդում Ամերիկայի Միացյալ Նահանգների Վաշինգտոն քաղաքում 10.04 - 12.04.2007թ. տեղի ունեցած “ԱՄՀ վիճակագրության վարչության փորձագետների սեմինար” հանդիպման հաշվետվության» մասին:

/Զեկուցող՝ Վ. Դանիելյան/

4.2. «Հաղորդում Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում տեղի ունեցած 21.04.-02.05.2007թ. ՄԱԿ Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված Կենտրոնական Ասիայում և Կովկասում անցումային տնտեսությամբ երկրների համար «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների համար վիճակագրության վերաբերյալ ենթատարածաշրջանային դասընթացի» մասին:

/Չեկուցող՝ Յու. Պողոսյան, Ա. Սաֆյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն:

5. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի» հանձնաժողով ստեղծելու մասին:

/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/

Որոշեցին՝

1. Ստեղծել Արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ. Դանիելյան	ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ (հանձնաժողովի նախագահ)
Վ. Գաբրիելյան	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Տ.Կոստանյան	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության մակրոտնտեսական ծրագրավորման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)
Ա. Պետրոսյան	ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ
Հ. Տիտիզյան	ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ
Գ. Գյուրջյան	ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ
Մ. Գալստյան	ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության վարչության պետ (համաձայնությամբ)
Կ. Կարապետյան	ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության վարչության Արտաքին հատվածի վիճակագրության բաժնի պետ (համաձայնությամբ)
Ա. Մարության	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պարտքի կառավարման վարչության արտաքին պետական պարտքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Տ. Խաչատրյան	ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ՏՏՀՍ գծով փորձագետ (հանձնաժողովի քարտուղար)

2. Հաստատել Արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

18.06.2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Լ.Պետրոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշմամբ հաստատված հավելված 2-ում նշված «24. Տնտեսական բաժին» բառերը փոխարինել «24. Գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժին» բառերով:

/Նորմատիվ/

2. «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշեցին՝

1. Հաստատել «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հոկտեմբերի 1-ից:

/Նորմատիվ/

3. . Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաշվետվություն Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 23.04-18.05.2007թ. Ֆրանսիայի Ժողովրդագրական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացություն, հիվանդացություն և համաճարակաբանություն» ծրագրին գործնական մասնակցության վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

3.2. Հաղորդում ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում 26.05-03.06.2007 թ. Համաշխարհային բանկում կազմակերպված՝ «Հայաստանի աղքատության գնահատում» սեմինարին մասնակցության վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան, Դ. Մարտիրոսովա, Կ. Կույումջյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն: